

շողենաւորին ապրանք յանձնելը կամ դատար-
կելը և այլն։
Դրանց հետ կապ ունի նաև նախապէս գոր-
ծարանների բաներ—չը բանելու հարցը ու
բաղադրի համար աչքի ընկնող գործերի մեծ
մասը գրանք են կազմում։ Գործերի այդ ա-
նօրմալ գրութեան պատճառով յաճախ առաջ
են գալիս դանազան անախորժ գէպեր, օրի-
նակ, մի տեղ գործ պատահած ժամանակ
սկսվում են ազգայնական խտրութիւններ և-
բան գալ և ամեն մէկը աշխատում է ինքը
ձեռք բերել գործը, որի պատճառով և տեղի
են ունենում վէճեր, կռիւներ ու մինչև իսկ
սպանութիւններ։

Գ. Գրեկորեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՉՆԻԱՆԻՑ

Մարտի 2-ին

Մեր կեանքը չէ կարող պարծենալ իր հայու
հինքով։ Մենք դեռ շատ հեռու ենք այն
զարգացման աստիճանից, երբ հայ կիւրծ ինք-
նուրոյն և մասուր կեանքի շահերով ապրէ։
Մեր օրիորդների և կանանց իդէալը դեռ չէ
անցել հարստութեան և շքեղ ու փառքի
կեանքի հրապոյրներից այն կողմը։ Եւ այդ
տիրութիւնը հորիզոնի վրա է կանգնում կե-
տեք՝ դրանք բացառութիւններ են կազմում։

Այդպիսի մի բացառութիւն էր և նորերումս
Սան-Ռեմոյում թրջախտից վախճանված 28
տարեկան ծաղիկ հասակում տիկին Սօֆիա
Բերքերեանը։

Տիկին Բերքերեանը մեր հազուադէպ հայ
կանանցից մէկն էր։ Մնւած լինելով հարուստ
միլիոնատէրի ընտանիքում և ստանալով գե-
ղեցիկ կրթութիւն, հանգուցեալը չէր բաւա-
կանում բուրժուա կեանքի պահանջներով,
այլ միշտ ձգտում էր գէպի բարձր, լայն մաս-
ուր ինտերեսները։ Նրա տան դուռը միշտ
բաց են եղել մտաւոր և հոգեկան շահեր որո-
նող երիտասարդութեան առաջ։ Տ. Բերքերեա-
նի գրական երեկոյթները յայտնի էին մեր
քաղաքում, ուր հաւաքվում էին ինտելիգենտ
և գրական շրջանի մօտ կանգնած երկու սե-
ռի երիտասարդները։

Հանգուցեալը յայտնի էր և տեղական ժուր-
նալիստների շրջանին։ Նա «Донская Рѣчь»
թերթի, որի գլխաւոր հրատարակչներից մէկն
էր նրա ամուսին Միլան Բերքերեանը, ամե-
նաեռանդուն և նուիրված աշխատակիցներից
մէկն էր, սկսած 1901—1903 թւականը։ Մի
ժամանակ նոյն իսկ նրան էին յանձնված
«Донская Рѣчь» թերթի բերելաբարիկական
և թարգմանական ճիւղի խմբագրական պար-
տականութիւնները։

«Донская Рѣчь» թերթում ապված էր մի
վերին աստիճանի սրտատուչ և համակրական
յօդուած խմբագրութեան և աշխատակիցների
կողմից, որտեղ ի միջի այլոց ասված էր՝ «բա-
ցի գրական գործունէութիւնից հանգուցեալի
յիշատակը մեզ համար թանգ էր և նրանով,
որ նա միշտ սրտին մօտ էր ընդունում բոլոր
այն ձախողութիւնները, որ կրում էր մեր
թերթը նրա աշխատութեան օրերով։ Նա սի-
րում էր և գործում էր գրական ապարելզում
այնպիսի մի ոգևորութեամբ և անշահասիրու-
թեամբ, որին ընդունակ են միայն այն մար-
դիկ, որոնք անկեղծ հաւատում են և սիրում
են գրական խօսքը»։

Յակովբ Գեղեցեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Չառական տօնին չբաւորներին բաժանելու
համար ստացանք մի հայուհուց, որ իր անու-
նը չի ցանկանում յայտնել, 5 բուրլի։

Չբաւորների օգտին ստացանք Թոմաս Մար-
գարեանից 5 բուրլի։

«Մշակի» 53-րդ համարում ապագրութեան էր,
որ Բագուի նախարարներն արդիւնքի ժողովի
խորհուրդը ներկայ պատերազմի ծախքերի հա-
մար յատկացրել է 100,000 ռ. և 50,000 ռ.
էլ նաւատորմի շինութեանը։ Մեզ տեղեկաց-
նում են, որ այդ լուրը ճիշտ չէ և պէտք է
ուղղել այսպէս՝ նախարարներն արդիւնքի խոր-
հուրդի յատկացրած 150,000 բուրլուց 100,000
ռ. նշանակված է յանձնելու Կառլի խաչի կար-
գադրութեանը, իսկ 50,000 ռ. պատերազմում
վնասուած անդրկովկասյի զինուորականներին ու
նրանց ընտանիքներին օժանդակութեան համար։

Դիտաւորութիւն կայ ամբողջ Ռուսաստա-
նում ստորագրութիւն բաց անել Նալայում
սանատորիումներ, հիւանդանոցներ և պան-

սիօններ հաստատելու։ Հեռաւոր Արեւելքում վի-
րաւորված պատերազմողների համար։

Մարտի 18-ին Բագուի նահանգական դա-
տարանում քննվեց երգչուհայ հաստատմամբ
Ն. Ի. Սվինտորօբեցկու Արքայապետ Յովսէփեա-
նին խօսքով վերաւորելու գործը։ Փաստաբանը
գործ է պաշտպանել Յովսէփեանի համար և
վարձի առիթով տարածաշուկային է ծագել,
որի ժամանակ փաստաբանն ասել է իր կրիւն-
տին. «մարդ եղիք և ոչ հայ»։ Յովսէփեանը
դիմել է հաշտարար դատաւորին, որը 1903
թ.ի հոկտեմբերի 29-ին արգելադրել է Սվին-
տորօբեցկուն։ Նահանգական դատարանում
Սվինտորօբեցկին խոստովանվեց, որ ասել է
այդ բառերը Յովսէփեանին, բայց պնդեց, որ
դրա մէջ վերաւորական ոչինչ չէ տեսնում
ինքը։ Դատաւորը առաջարկեց հաշտութիւն,
իսկ պ. Յովսէփեանը պայման դրեց—«եթէ պ.
Սվինտորօբեցկին կը տալ Կարմիր խաչի օգտին
100 բուրլի, կը հաշտվեմ»։ Երբեք հաւա-
տարանաւոր չուղեց հաշտութիւն։ Մէջ ժամանակ
նահանգական դատարանը, գործը դանդաղ
քննելով մեղաւոր ճանաչեց Սվինտորօբեցկին և
ենթարկեց նրան հետեւող պատժին—կամ 10
բուրլի առգանք, կամ 2 օր բանտարկութիւն։

Հին-Նախիջևանի գրում են «НОВ. ОБ»
-ին, որ վերջին օրերս մի խումբ հարբած
մարդիկ քէֆ էին անում լուսանկարիչ Դրա-
պովի տանը՝ առաջին ագմուկով։ Այդ տան
դիմացը գտնվում է մանկեղանակ մզկիթը,
իսկ այդ օրը մանկեղանակների «Աշուրի» կամ
սուղի երեկոն էր։ Չը նայելով մի քանի ման-
կեղանակների ինքիւրենքին խնջոյքը դադա-
րեցին, հարբածները լուռ և շարունակում են
թաւ անել, երգել, ըզուել։ Ծոռօգրաֆի հիւ-
րերը եղի են մի վաճառական, մի ուսուցիչ
մի ոստիկանատան պաշտօնեայ և Զինգերի
ընկերութեան գործակալը։ Մզկիթում պաշ-
տօնեանքը վերջնապէս յետոյ, երեկոյեան
ժամը 11-ին, մզկիթից դուրս եկողները յար-
ձակվեցին Դրապովի ֆօտօգրաֆիայի վրա քա-
րերով և փայտերով, կտորեցին բոլոր ապա-
րիկները և փայտի երեք հաբուած հասցրին
Դրապովի մէջքին։ Իսկ սրա ընկերները կա-
րողպան թագնիւն մտնում, որով և ա-
զատվեցին ձեռքից։

Չառական տօնի կիշնիւկից 51 հրէա ընտանիք-
ներ մեկնում են Կալիֆօրնիա երկրագործու-
թիւնով պարապելու համար։ Դեռ մի քանի
ամիս առաջ նրանք ուղարկել էին պատուի-
րակներ Ման-Ֆրանցիսկօ, որոնք ձեռք բերին
1,200 դեռստին հող, սկզբից վճարելով միայն
12,000 բուրլի, իսկ մնացածը բաւական եր-
կար տարինների ընթացքում աստիճանաբար
հանգցնելու պայմանով։

ՇՈՒՇՈՒՑԻ մեզ գրում են. «Այստեղ հասած
ճշգրիտ տեղեկութիւններից երկուսն է, որ
Չառիկ տօնի առիթով Մայիսից և և գա-
նազան տեղերից տեղս ստացված ձկները հնա-
ցած լինելու պատճառով, ինչպէս ասում են,
մեծ մասամբ փչացած են և պարունակում
են իրանց մէջ վնասակար թոյներ։ Մի քանի
մարդիկ այդ ձկներից թունաւորվելով, արդէն
մեռել են։ Մենք այդ լուրին գօտարութեամբ
չը հաւատացինք, եթէ որ փաստը տեղի չու-
նենար մեր աչքի առջև։ Շուշեցի Յ. Ա. իշխալ
տեղից վերադառնալով, մեռնում է վնասակար
ձուկ ուտելուց, նոյն քաղաքացի Մ. Ա. և Ե.
Թ. ծանր հիւանդ լինելով, մեծքիմաճ են դար-
ձեալ նոյն պատճառով. դրանք քաղաքումս են
գնել այդ ձուկը, որ նոր է ստացված։ Այդ
ձկները պատկանում են «զըլըլալ» և զըմ-
բուանը՝ կոչված տեսակների։ Աչքի առաջ
ունենալով այդ քաղաքային վարչութեան սա-
նիտարական մարմնի ու բժիշկների լուրջ ու-
շադրութիւն ենք հրաւիրում այս հանգամանքի
վրա։

ՎԻԱՆԻԱՎԵԱՍԶԻ մեզ գրում են. «Տեղին
եկեղեցական ծխական դպրոցի օգտին, մարտի
18-ին, սերտօրէն մասնակցութեամբ ներկա-
յացրին Ամին Տէր-Գրեկորեանցի Դատկեան
սուր» գրաման, երեք գործողութեամբ և նոյն
հեղինակի «Վայրենի» վոլնիւլը մէկ գործ-
ղութեամբ։ Հասարակութիւնը ընչ էր, իսկ
խաղը թոյլ անցաւ։

ՀԱՌԻԱՐԱՅԻՑ (Եջմիածնի գաւառ) մեզ
գրում են. «Մօտ օրերս մեր հարեան Դօլս
գիւղում հայ և պարսիկ բնակիչների մէջ մի
ամենաջնջին պատճառով, տեղի ունեցաւ հա-

տարակական կռիւ։ Կռուի շարժառիթը եղել է
այդ երկու ազգերի միմեանց հետ ունեցած
թշնամութիւնը և մասնակցականների սգաւոր
տօները, որոնց ժամանակ, առհասարակ այդ
ֆանատիկոսները զոգուած են լինում դէպի
օտարազգիները։ Երկու կողմիցն էլ ծանր վի-
րաւորված են 10 հոգի, որոնցից երկուսը վի-
րաւորված են քնդակներով, իսկ մնացածները
խենթանքով և բարեբաղով։ Սպանութիւն տեղի
չէ ունեցել։ Գործը հասել է ոստիկանութեան
բայց կարանաւորվածներ չը կան»։

ՋԻԳԻՄԱՆՈՒԻՑ մեզ գրում են. «Լուր ստա-
ցանք Երեւանից, որ այնտեղ, մարտի 13-ին,
արեւ մայր մտնելուց յետոյ, անյայտ մարդ-
կանցից գնդակահար է եղել մեր Դանի-Բա-
ղարի ջրպետ Սարգիս Բաղդարեանը։ Հանդու-
ցեալը դեռ շատ երիտասարդ էր. 50—53 տա-
րեկան հազիւ լինէր, շնորհիւ իր մեծ հարբու-
տութեան, աչքի էր ընկնում իր բռնած մեծ
դիւրբով։ Հանդուցեալը որպէս կռուակարիչ
օրինակելի էր, և վերին աստիճանի անկաշառ
մի անձնաւորութիւն»։

ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Մե-
զանում 3—4 օր շարունակ փոքրիկ ընդհա-
տուճիկով յորդ անձրեւներ տեղացին, որոնք
առ այժմ, կարելի է յուսար, շատ կը նպաս-
տեն գիւղացիների ցանքերի աշոյ տնկման
երկարատե անձրեւների շնորհիւ, դիւրում մի
ցուալի դէպք պատահեց. մարտի 7-ին, գի-
շերվայ մօտաւորապէս ժամը 9—10-ին Ստե-
փան Տէր-Յովսէփեանցի բնակարանի մի-
մեանց կից երկու սենեակները փուլ են գալիս,
քանդուկով նաև մասանը, որը կազմում էր շի-
նութեան ներքին յարկը։ Սենեակների և մա-
նանի մէջ եղած գնահատելի իրերը, նաև կահ-
կարասիքը միացել են հողի տակ, այժմ աշ-
խատում են իրերը դուրս հանել։ Բարեբախ-
տաբար, մարդկային զոհեր չը կան. ընտանի-
քը ապրելիս է եղել այդ փրկած սենեակների
կից փոքրիկ սենեակում։ Վնասը մեծ է. տան-
տէրը միջակ կարողութեան տէր մարդ է»։

ԱՍՏԻԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Վերջապէս
Ասիաբաղդիներս էլ առիթ ունեցանք տեսնել
գիւրաւան Արեւիկանին, որը փետրվարի վերջե-
րին երեք ներկայացում տալուց յետոյ, իր
խմբով անցաւ Տաշկենդ, Սամարկանդ և Մերվի
նմիւր մէջն են։ Չարիֆեան ամուսինները, օր
Քնար և պ. պ. Ոսկանեան, Յարութիւնեան և
Երեմիայեան։ Վերոյիշեալ քաղաքներումս էլ
ներկայացումներ տալուց յետոյ վերադարձաւ
և մարտի 16-ին Վերոսպեկտիտների դահլի-
զում տուեց «Օտէլի»։ Սակայն արդեօք կարո-
ղացան տեղոյս հայ հասարակութիւնը գնա-
հատել պ. Արեւիկանին ինչպէս հարկն է այն
հասարակութիւնը որից շատ անգամ բողոքներ
ենք լսել, թէ ինչո՞ւ մեր յայտնի գերասան-
ներն Անդրկասպիան երկիրը չեն գալիս Դրժ-
րախտաբար, պիտի խոստովանել, որ հայ
հասարակութիւնը, որը Ասիաբաղդում բաւա-
կան մեծ թիւ է կազմում, անտարբեր վերա-
բերվեց, և առանց այն էլ քէֆ մուտք առաւ
թատրոնական դահլիճում շատ դատարկ ա-
թոնի կային. բաւական է իշխել, որ «Օտէ-
լի» ներկայացման մուտքը ընդամենը եղել է
200 ռ. որից եթէ ծախքն հանելու լինենք,
մի չնչին գումար հազիւ թէ մնար։ Որքան
ցանկալի է յայտնի դերասաններին տեսնելը,
նոյնքան և պէտք է գիտենալ տաղանդների
գնահատելու Այստեղ էր և երգիչ Բարիսուրա-
րեանը. սա եւ առաջներում երկու կոնցերտ
տալուց յետոյ ամսին 17-ին միևնոյն դահլի-
ճում տուեց իր վերջին կոնցերտը։ Սրա կօն-
ցերտներին եւ հայ հասարակութիւնը փայ-
լում էր իր կատարեալ բացակայութեամբ։
Մարտի 17-ին պ. Արեւիկանց իւր խմբով գնաց
Դըլըլ-Արվաղ և Կրասնօձօղսկ, որտեղ ներ-
կայացումներ տալուց յետոյ կը վերադառնայ
Կովկաս։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՊՍՏԻՍԱՅԻՑ ԴՈՒՐԶԸ

Պօր-Արսուր իր սեղանն է։ Ինչպէս յայտնի
է, մի քանի ժամանակ առաջ «Daily Mail»
լրագրի թղթակիցը հեռագրել էր Լոնդոն իր
լրագրին, թէ Պօր-Արսուրը լքել է Ռուսիե-
րից և եւրոպականների վերջնական յաղթու-
թիւնը շուտով կը լինի։ Նրա այդ լուրը սուս
դուրս եկաւ, թղթակիցը իր լրագրի սեփական
շողենաւով փորձեց մօտենալ Պօր-Արսուրին
և թղթուրութիւն խնդրել մտնել բերդը ու տե-
սակցութիւն ունենալ ծովապետ Մակարովի

հետ։ Երբ «Daily Mail»-ի շողենաւը մօտեցաւ
10 մղոնի վրա Ոսկէ Սարին, նաւահանգստից
դուրս եկան երկու ռուսական կտորիչ—ակա-
նանաւ և զինեցին դէպի շողենաւը։ Շուտով
մի քանի ռուս նաւատիրներ մի օֆիցերի հետ
բարձրացան անգլիական շողենաւը և թղթա-
կիցը հաղորդեց. նրանց իր պատեան պատ-
ճառը։ Օֆիցերը բնեց նաւային թղթիւրը,
խուզարկեց ամբողջ շողենաւը, նոյն իսկ չի-
նայի նաւադներ ծածկերից քաշեց, համոզվե-
լու համար որ նրանք ծագեալ եւրոպացիներ
չեն։ Համոզվելով, որ մաքսանկաւական բաներ
չը կան, օֆիցերը բանակցութեան մէջ մտաւ
թղթակից Բրենդլի հետ, որ նուրից նրան
մի քանի լուսանկարներ «Վարեալ» և «Կօ-
րեէց» նաւերից վերցրած։ Օֆիցերը յայտնեց,
որ ռուս ծովային օֆիցերները շատ շնորհա-
կալ կը լինեն այդ լուսանկարների համար։
Թղթակիցը հարցմունքին, ինչպէս են գնում
գործերը Պօր-Արսուրում, նա ստացաւ պա-
տասխան. «Ինչպէս և առաջ»։ Այդ միջոցին
ռուս կտորիչը մօտեցաւ շողենաւին։ Ռուս
նաւատիրների մեծ մասը, թղթակիցի ասելով,
մօտ 25 տարեկան մարդիկ են։ Նրանք սեւա-
ցած էին միջից և ըստ երեւոյթին, յոգնած ծանր
ծառայութիւնից, բայց կայսառ էին, գուարթ
և պատրաստ ու կազմ կուր համար։ Միւս
կտորիչ-ակնամանի հրամանատարը նոյնպէս
եկաւ անգլիական շողենաւը և խօսեց թղթակի-
ցի հետ։ Նրանց հետ ունեցած խօսակցութիւ-
նից Բրենդլը այն տպաւորութիւնը ստացաւ,
որ ծովապետ Մակարովի պաշտօնի մէջ մտնե-
լուց յետոյ նաւատորմում ամեն տեսակ բար-
ւորումներ են սկսվել. և տակտիկան, և իր
ծովապետի անձնաւորութիւնը ներշնչում են
ռուսներին կատարեալ վառարկութիւն։ Մակար
թղթակիցը վերջի վերջոյ քաղաքավարի մեր-
ժուհի ստացաւ. նրան թոյլ չը տուեցին մտնել
Պօր-Արսուր։ Բայց նա համոզվեց, որ Պօր-Ա-
րսուրը իր տեղումն է և միշտ պատրաստ
ընդունել հիւրերին։ (Новое Время)

Ռուսական գործի ֆանակարիւնը. «Localan-
zeiger» լրագրում ապված է գններալ-մայօր
կուն Փօն-Պէլլի յօդուածը, որի մէջ նա պաշ-
տօնական ռուսական տեղեկութիւնների հիման
վրա տալիս է գններալ Կուրօպուտկինի արա-
մալութեան տակ ներկայումս գտնված բոլոր
գործերի ընդհանուր թիւը։ Հետեւի գործ նա
բոլորը հաշվում է 142,475 հոգի, հեծեալօրը
նմիւր մէջն են։ Չարիֆեան ամուսինները, օր
Քնար և պ. պ. Ոսկանեան, Յարութիւնեան և
Երեմիայեան։ Վերոյիշեալ քաղաքներումս էլ
ներկայացումներ տալուց յետոյ վերադարձաւ
և մարտի 16-ին Վերոսպեկտիտների դահլի-
զում տուեց «Օտէլի»։ Սակայն արդեօք կարո-
ղացան տեղոյս հայ հասարակութիւնը գնա-
հատել պ. Արեւիկանին ինչպէս հարկն է այն
հասարակութիւնը որից շատ անգամ բողոքներ
ենք լսել, թէ ինչո՞ւ մեր յայտնի գերասան-
ներն Անդրկասպիան երկիրը չեն գալիս Դրժ-
րախտաբար, պիտի խոստովանել, որ հայ
հասարակութիւնը, որը Ասիաբաղդում բաւա-
կան մեծ թիւ է կազմում, անտարբեր վերա-
բերվեց, և առանց այն էլ քէֆ մուտք առաւ
թատրոնական դահլիճում շատ դատարկ ա-
թոնի կային. բաւական է իշխել, որ «Օտէ-
լի» ներկայացման մուտքը ընդամենը եղել է
200 ռ. որից եթէ ծախքն հանելու լինենք,
մի չնչին գումար հազիւ թէ մնար։ Որքան
ցանկալի է յայտնի դերասաններին տեսնելը,
նոյնքան և պէտք է գիտենալ տաղանդների
գնահատելու Այստեղ էր և երգիչ Բարիսուրա-
րեանը. սա եւ առաջներում երկու կոնցերտ
տալուց յետոյ ամսին 17-ին միևնոյն դահլի-
ճում տուեց իր վերջին կոնցերտը։ Սրա կօն-
ցերտներին եւ հայ հասարակութիւնը փայ-
լում էր իր կատարեալ բացակայութեամբ։
Մարտի 17-ին պ. Արեւիկանց իւր խմբով գնաց
Դըլըլ-Արվաղ և Կրասնօձօղսկ, որտեղ ներ-
կայացումներ տալուց յետոյ կը վերադառնայ
Կովկաս։

Ինչպէս իր նախ ռուս-եւրոպական պատ-
շաղմը։ Փրանսիական «Le Correspondant»
հանդէսը մի յօդուած է տպել, նուիրված այն
հարցին, թէ ինչքան փող կը նստի Ռուս-եւ-
րոպական պատերազմը ամեն մի կուտը կող-
մին վեց տոկոս ընթացքում։ Հաշիւը կազմ-
ված է շատ մանրամասն, օրինակ, հաշված է
նոյն իսկ պղպիղի այն քանակութիւնը, որ
հարկաւոր է մանյուրական գործի համար.
հաշվելով 5 գրամ ամեն մի հոգու և 500,000
հոգու 180 օրվայ համար, ստացվում է 48
տոնն պղպիղ, որ պէտք է փոխադրվի սիբիրեան
երկաթուղիով։ Այդ մանրամասն հաշիւը
12 էլ տեղ է բռնում և կատարված է ռուս-
կան մեծ խնամքով։ Իբրեւ հետեւանք ստաց-
վում է, որ գլխաւոր ծախսը Եւրոպայի հա-
մար նաւատորմի ծախքն է, իսկ Ռուսաստա-
նի համար—1,000,000 անցորդի և 900,000
տօնն բռնել փոխադրութեան (7000 վերստ
տարածութեան վրա) արժէքը։ Առաջին վեց
ամսվայ ընթացքում Եւրոպայի պէտք է ծախսէ
250 միլիօն, իսկ Ռուսաստանը—380 միլիօն
բուրլի։

Այս հաշիւը երկուսն է, որ պատերազմը ան-
համեմատ ասելի էժան պէտք է նստէ Եւրոպ-
ային, քան Ռուսաստանին։ Բայց բաւարարին
ուրիշ ֆինանսական պատկեր է ստացվում,
երբ մենք վերցնենք յարաբերական թուանշան-
ներ։ Պատերազմի վեց ամսում, Եւրոպայի
պէտք է ծախսէ ասելի, քան իր ամբողջ ստա-

բեկան բիւշէան: Ռուսաստանը պէտք է այդ ժամանակամիջոցում ծախսէ իր տարեկան բիւշէանի միայն մի վեցերորդ մասը: Հետևաբար, եթէ հակառակորդներից իւրաքանչիւրը վերցնէ իր ժողովրդից բոլոր պետական հարկերը կընկալի, այդ փողերը նապօնիայի համար կը բաւականանային հինգ ամիս, իսկ Ռուսաստանի համար—երեք տարի:

Բացի դրանից, եթէ նապօնիան կընդադադարէ իր պետական պարտքը, ստացված փողերը կը բաւականանան նրան 14 ամիս պատերազմ մղելու, իսկ եթէ նոյնը անէ Ռուսաստանը, նա կարող է ստացված փողերով պատերազմը շարունակել 8½ տարի: (НОВОЕ ВРЕМЯ)

Նապօնական լախսահները: Նապօնական լախսահները շարունակում են յախորտալ Ռուսաստանի դէմ, ինչպէս հաղորդում է «Ֆիգարո» լրագրի Տոկիոյ թղթակիցը:

«Բոլորովին բնական է—ասում է «Ջիլի» լրագիրը—եթէ ռուսները իրանց ամբողջ (!) վարձուներով փորձի ենթարկեն մեր օֆիցերներին և զինուորային մեծահոգութիւնը: Բայց մերոնք գիտեն զսպել իրանց և չը թողնուի իրանց քաղաքակրթութեան և մարդասիրութեան ընդհանուր ընդունված կանոնների դէմ որ և է բան անել: Այն ժամանակ, երբ մեր թշնամին, զրկված քաղաքակրթութեան արտաքին փայլից, հանգէս դուրս կը գալ աշխարհի առջիկ իր մերկ բարբարոսութեամբ (!), մեր չափաւորութիւնը և մարդասիրութիւնը, իբրև կոնսերւատ, կը կրկնապատկեն քաղաքակրթ աշխարհի համակրութիւնները դէպի մեզ:

«Նիպոլոն» նացիոնալիստ թերթը հետեւեալն է գրում. «Նապօնիան կը վնասէ մոսկովիցիների գործը ոչ միայն Մանչուրիայից, այլ և ամբողջ Հեռուստը Արևելքից և կարգիւնէ նրան պահել այդ ծովերում զինուորական նաւեր: Ի հարկէ, Նապօնիայի պահանջները կաճեն պատերազմի շարունակմամբ, ուստի Ռուսաստանի օգուտն է որքան կարելի է շուտ սկսել աղբիւրի հաղորդումն (!): «Նապօն» լրագիրը կարծում է, թէ Ռուսաստանը շուտ չի սկսի հաշտութիւն աղբիւրի: Այն փաստը, որ նա մինչև այսօր չը վստահացաւ հրապարակել լուրերը իր պարտութեան մասին Պորտ-Արտուրի մօտ, ցոյց է տալիս նրա յամառ վճռակամութիւնը» (НОВОСТИ)

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՅՈՒՆ

20 մարտի

ՏՈՒՂԱ: Ի նկատի ունենալով այն, որ «Վարկա» հրամանատար կապիտան Ռուզնէվ հերոսաբար ըստովին գործելով ծովային կուի ժամանակ հապոնական նաւատորմի հետ, ծագում է Տուլայի նահանգի վեհալեւան գաւառի ազնուականներից, ազնուականութեան ժողովը որոշեց լիազօրութիւն տալ նահանգական պարագլխին ազնուականութեան անունից ողջոյնի հետագիւր ուղարկել Ռուզնէվին, իսկ Տուլայի վրայով անցնելու դէպքում ողջունել պատգամաւորութեան միջոցով:

ՍԵՒԱՍՏՊՈԼ: Երկրորդ կարգի կապիտան Բէլիսեով և 19 օֆիցերներ ուղևորվեցին Պորտ-Սալոյից: «Запорожцы» մակոյդի հրամանատարը գեկուցանում է Կ. Պոլսի ծովային Սկրիպովին. «Վարկա» օֆիցերների և նաւատիրների առաջին մասը «Մալայի» շոգենաւով ժամանեցին Կ. Պոլսի մարտի 16-ի գիշերվայ մօտ մէկ ժամին: Եւ, զինուորական-ծովային գործակալ Շվանիկ հետ շոգենաւային առաջատանաւ զբաղւելով իրանց զինուորային շոգենաւին: Կապիտան Ստեպանով, լսելով մեր ողջոյնը, խնդրեց զեկուցանելու, որ նա, և «Վարկա» օֆիցերները և նաւատիրները շատ զգացված են իրանց համար առաջին ողջոյնից և խորին շնորհակալութիւն են մատուցում ձեր գերազանցութեանը և բոլոր չէրոմօրցիներին և որ նրանք միշտ յիշում են խաղաղ-ովկիանեան ետեղորայի իրանց սիրելի ծովայիններ: Բայց զբաղւել Ստեպանով խնդրեց ինձ զեկուցանելու, որ նա կընչելի վերջին պատերազմութիւնների ժամանակ կուի համար յիշեց ձեր մասին և բոլոր ձեր ցուցումները այդ դէպքի համար և որ մինչև վերջը, յիշելով նրանց, գործում էր ձեր գերազանցութեան ցուցմունքներով: Հերոսներին «Չապորոժցի» նաւի վրա պատկանող յետը «Մալայի» շոգենաւից ցեղերկվայ մէկ ժամին ուղևորվեց Օդէսսա: «Մալայի» շոգենաւի «Չապորոժցի»-ի մօտով անցնելու ժամանակ եւ բարձրացրի «Ողջոյն» քաղաքին: Ազգանշանը: «Նաւատիրներ» «ուրա» էին աղաղակում: Քրանսիական և անգլիական

պահակաւորներ «ուրա» էին աղաղակում: «Մալայի» նաւից պատասխանում էին: ՕԴԵՍՍԱ: Ծովագնացների գալու առիթով ընտելիների հայրենասիրական տրամադրութիւնը շատ բարձր է. ուր որ նրանք երևան, իսկոյն տեղի են ունենում ահագին օվայիա-ներ: Քաղաքային վարչութիւնը նախաձեռնով պատուաւորեց ծովագնացներին Նախաձեռնեց յետոյ ծովագնացները երաժշտութեամբ գնանաւը, որը ցերեկվայ չորս ժամին ճանապարհը ընկաւ Սևաստոպոլ: Իրանց միացաւ այնքան ժողովուրդ, որ նաւահանգիստը չը կարողացաւ տեղաւորել նրանց բոլորին: Ծովային շրջակայները ծածկվեցին հասարակութեամբ: Օդէսսան «ուրայի» բարձր աղաղակներով ճանապարհ գցեց հեռացողներին: Կապիտան Ստեպանով հաղորդեց, որ ամերիկական «Վիկտորի» նաւի հրամանատարը բոլոր ժամանակ Զէմուլյոտում կանգնելու ժամանակ, ընդհանրապէս, մեկուսացած էր պահում իրան, չէր ծանօթանում ուրիշ երկրների շոգենաւերի հրամանատարների հետ և չը մասնակցեց խորհրդակցութեան և բողոքին մինչև կուրի, որովհետև նրան ոչ ոք չը հրահրեց: Իսկ կուրից յետոյ նա ուղևորներին հետ նոյնպէս ուղարկեց բոլոր և նաւակներ աղաղակու համար: Մեր նաւատիրներին Վիկտորի» նաւի վրա ընդունելու մասին երեք Ռուզնէվ չէր ինքրիկ, որովհետև հրահրութիւն չը կար: Մի քանի ժամը վերաւորվածներ փոխեցին Զէմուլյոտում և Հոնկոնգում Քրանսիայիների հոգաւորութեան տակ: Զիջել չէ այն լուրը, թէ կորէացիները ջրից ազատվողներին բռնում և յանձնում էին հապոնացիներին, հապոնացիների ձեռքը մեղադրեց ոչ ոք չընկալու:

ՄՈՍԿՎԱ: Ժամանեց հաղորդակցութեան ճանապարհների միջոցառում իշխան Նիկոլով և ճանապարհ է ընկնում Պետերբուրգ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մարտի 19-ին ինվալիդների օգուտին արված կոնցերտին ներկայ էին թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրիները, Մեծ Իշխանները և Մեծ Իշխանուհիները:

ՄԵՒԱՍԻԱ: Մարտի 20-ին Վիլհելմ Կայսրը «Մէլլայէ» նաւով անցաւ դէպի Տէրմինու:

Կ. ՊՈԼԻՍ: Դիմաւորական շրջաններում լուծված են համարում մակիդոնական վերայեթները զանազան պետութիւնների այն օֆիցերների միջև բաժանելու հարցը, որոնք հրահրված են մակիդոնական ժամադրմանից կազմի մէջ: Ռուսները հակադրութեան տակ կը լինի Մարտիկի վերայեթը: Գերեզալ Զօրջիսի բնակիչները տեղը նշանակված է Մարտիկի քաղաքը:

21 մարտի

ՏՈՒՂԱ: Տուլայի նահանգական ազնուականութեան ժողովը որոշեց Նուրին Մեծութեան անձնական տրամադրութեան տակ դնել 100,000 ռ. և այդ գումարը ամենահպատակութեան միջոցով: Բայցի գրանցի ժողովը 25,000 ռ. կընդուն քաղաքից չեւաւորների ընտանիքներին նպաստներ տալու համար:

ԲԵՐԼԻՆ: (Ցատուկ): Սէուլից հաղորդում են, որ կորէական կայսրը, որպէս պատասխան մարկիզ Իտոի Սէու գալուստ, Տոկիո է ուղարկում ներքին գործերի մինիստրին մեծ սկիտայի ուղեկցութեամբ: Գորէական դեսպանը մեծ ընդունել կը յանձնէ միլիտարի: Տոկիոյց ուղարկված տեղեկութիւնների համեմատ, 16 ժուրնալիստներ, մեծ մասամբ անգլիացիներ և ամերիկացիներ, թողլուութիւն ստացան ուղևորվելու պատերազմական գործողութիւնների բեմը: Օգոստոս և նրանց նախնային հապոնական փոխադրող նաւերից մէկի վրա:

ԲԻՂԵՍ: Սէմուս անկարգութիւններ ծագեցին քաղաքացիների ընդհարման պատճառով, երբ հանդիպեցին քաղաքացիական թագման եկեղեցական հանդէսով: Անդրանականները և հանրապետականները բարեք էին գրցում քահանաների վրա, ասորձանակներ էին արձակում դարձողների շէնքերի վրա, աշխատում էին, սակայն ի գուր հրդեհել եկեղեցին և աւերեցին կաթոլիկական գերեզմանոցը: Մօտ 11 մարտի վերջերսված են, որոնց թուում մի քանիսները ծանր կերպով:

ԲԵՐԼԻՆ: (Ցատուկ): Աւստրո-ունգարական դեսպան Դուբա շուտով Բէլգրադ կը վերադառնա, որովհետև դեսպաններին պալատական ծառայութիւնից հեռացնելու պահանջը կատարված է: Մտադրութիւն չը կայ դեսպանի փոխարէն մի ուրիշ անձն նշանակել: Սերբիական կառավարութիւնը ծանուցում ստացաւ հոռմական կարգիւնից, որ իտալական դեսպանը մօտիկ ապագայում կը վերադառնայ իր պաշտօնին:

22 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մարտի 20-ին Հեռուր Արևելքից պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացվել: Սերբիական թագաւորի մօտ եղած արտակարգ դեսպան Զարիկովին հրամայված է լինել արտաքին գործերի մինիստրութեան անդամ: Պապի մօտ գտնվող մինիստր-նախագահ Դուբաւտովին հրամայված է լինել սերբիական թագաւորի մօտ արտակարգ դեսպան: Ներքին գործերի մինիստրը որոշեց նորից թողաւորել «Կուրիէ» լրագրի հատով վաճառելու:

ԼԵՍՕՆԱ (Սեփական թղթակցից): Պատերազմական գործողութիւնների բեմում հանգստութիւն է: Լեւոնանում օրինակելի կարգ է տիրում: Գերեզալ-աղիւտանտ Կուրոպատկիցը ընկնում է գործը և հիւանդանոցները: Ռուսների առաջարկած բարձր գնների պատճառով չենական թէ դիւղական և թէ քաղաքային ազգաբնակչութիւնը գործերին ծախում է ամեն տեսակ անհրաժեշտ բաներ: Այն լուրերը, որ հաղորդել էին Շանգհայի անգլիական լրագիրները ռուսների Մանչուրիայում գնուցման արած ժամանակ գործարարած բռնաբարութիւնների մասին՝ սաբաժն զարշելի լուրեր են: Զինացիները նոյնպէս հաճուքով ծախում են անասուններ և ուսու գործերի համար իրանց բնակարաններում տեղ են տալիս: Ոչ մի տեղ թիւրմայութիւններ չը կան: Ինկուսում կանգնած են 11 առևտրական նաւեր, որ եկել են բեռ վերցնելու՝ փոխադրելի հրամանով: Ապարանքներ Ինկուսից թոյլ է տրւում դուրս տանել միայն չէզոք նաւահանգիստները, ապառնութեան համար նախ բեռնի ամբողջ արժէքի չափ գրաւական գնելով ռուս-չինական բանկը և չէզոք նաւահանգիստը հասնելով յետ ստանալով նրան: Լեւոնանում և ուրիշ կէտերում գործերը առողջ են: Զինուորների տրամադրութիւնը առողջ և ուրախ է: Բոլորը ծառաւ են կուրի: Նուիրատուների կարող են զինուորային պատճառով դեղեցիկ և օգտակար գուարճութիւն՝ բանակը ուղարկելով ընթերցանութեան գրքեր:

ՍԵՒԱՍՏՊՈԼ, Մարտի 21-ին ժամանում են Զէմուլյոյի հերոսները: Եղանակը հիմնաւի է: Այրվեց Գօգիլուայի ցիբիլ:

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ (Սեփական թղթակցից): Պորտ-Արտուրի շրջաններում փոփոխութիւններ չը կան: Մարտի 19-ին զինուորական պատիւներով թաղեցին մարտի 14-ի գործում սպանված հապոնական բոցմանին: «Ноб. Край» իւրաքանչիւրը ստանում է առատ նուէրներ նաւատորմի ուժեղացման, Կարմիր խաչի և սպանված պատերազմողների այրիների մէջ աչքի ընկնող մասնակցութիւն են ցոյց տալիս նաւատորմի նաւատիրները: Փոխարանքն ընդից ցամաքի և ծովային մարտկոցների ամրութիւնները, բաժանեց նուէրներ, Կայսրի անունից շնորհակալութիւն յայտնեց հերոսական ծառայութեան համար և բերդի թնդանօթաձիգներին յանձնեց այն հին բրոնզէ խաչը, որ ուղարկել է տիկին Ռուբենովան՝ ամենագործող ուրախութեան ենթարկված մարտիկից վրա կացնելու համար:

ԱՍՍՏԵՐԳԱՍ: «Տերեզա» լրագիրը հաղորդում է Կոստանդուպոլիս (Սուստորա) ստացած լուրը, որի համաձայն՝ ճանապարհին եղած ներքինապետական գունդը Աշխին շրջանում տեսաւ, որ բոլոր գիւղերը շրջապատված են զորեղ խրամաններով: Զօրքերը յարձակվեցին թշնամու վրա և սպանեցին 541 մարդ: Հօլլանդացիներից սպանված են 3 և վիրաւորված 25 հոգի: Բացի դրանից թեթև վիրաւորված են 3 օֆիցերներ:

ՄԵՒԱՍԻԱ: Վիլհելմ Կայսրը Տաորմինից ուղևորվեց Կարթուղ դէպի յունական թատրոնը, որ և մանրամասն նայեց: Իրիկանդէմ կայսրը վերադարձաւ Մէսսինա:

ՍԵՒԱՍՏՊՈԼ: Մարտի 21-ին ցերեկվայ ժամը 11-ին ռուսական ընկերութեան «Ս. Նիկոլայ» շոգենաւով ժամանեցին «Վարկա» կրէյսերի ծովագնացները: Շոգենաւի նաւակա-յարանը մտնելու ժամանակ որոտաց թնդանօթային ողջոյնը և նաւակայանում կանգնած էակաւորային ծառայողները նաւերի ափերին շարքով կանգնեցին: Նաւի ներս մտնելու ժամանակ ծառայողներն ուղեկցեցին նրան որոտագին «ուրա»-ով: Երբ «Ս. Նիկոլայ» նաւակայանին կապվեց, նրա վրա բարձրացաւ Սև ծովեան նաւատորմի դրլուստը հրամանատարը, ողջունեց ծառայողներին և մի խորհայրենասիրական ճառ ասաց, որից յետոյ ծովայինտի-օգնական Սկրիպովը երկար համբուրեց կապիտան Ստեպանովի, նախկին ծառայակցի հետ, փոխեց նրա հետ իր գէոր-

գեան խաչը: Շոգենաւից իջնելու ժամանակ հերոս-ծովագնացներին դիմաւորեցին քաղաքային վարչութեան ներկայացուցիչները, որի ժամանակ քաղաքագլուխը՝ բարենիցից յետոյ ալ ու հաց ներկայացրեց: Նախիմով ծովագնացի արձանի առաջ եղած հրապարակի վրա մագթանը կատարվեց, իսկ յետոյ ծովագնացները զարգարված փողոցներով նուագով ուղևորվեցին 34-դ նաւատորմային էկիպաժի գորանոցները, ուր նրանց նոյնպէս սպանվում է բոլոր էկիպաժներին հանդիսաւոր հանդիպումը: Առժամանակ օֆիցերները քաղաքային վարչութեան հոգաւորութիւնով տեղաւորված են քաղաքի բաւարդի հիւրանոցներում: օֆիցերների Սեվաստոպոլում մնալու բոլոր ժամանակամիջոցում քաղաքը նրանց ծախքն իր վրա է առնում: Բուլվարները, փողոցները, հրապարակները, տների տանիքները և պատշգամբները առաւօտվանից ծածկված են ժողովրդով: Ամբողջ ոգևորութիւնն անկարագրելի է:

ԲԵՐԼԻՆ: «Յաւուրէ» Յայտուէր» լրագրի պատերազմական թղթակցիցը համարում է Զոնչ-ժուլ մօտ եղած ընդհարումը արժանի ուշադրութեան, շնորհիւ կապոնական էսկադրաների վարձուքին: Դրա մէջ նա տեսնում է նոր ապացոյց, որ հեծելազօրքը հանդիսանում է կապոնական գործի ամենաթոյլ մասը:

ԳԱՅՐԻ: Մարտի 21-ին պրինց Ալեքսանդր Պետրովիչ Օլիւնբուրգսկիի ներկայութեամբ օրհնուրեց Կուրիսիան գնդի գորանոցներին շինութիւնը: Փառանկ շինված է լողարանի նոր տիպի շինութիւնը, որի մէջ կարելի է օգտվել առջ և պաղ, ծովային և անուշ ջրերի վանաներով ու դուշերով: Սէզօնը բացվեց: Լողացողների զարը սկսվեց:

ՍՕՔԻՍ: Այստեղի ձեռնհաս շրջաններում գտնում են, որ Կ. Պոլսի յունական դիպլոմատիական գործակալի արած առաջարկութիւնները տիեզերական պատրիարքի զանազանքի առիթով, բողոքների յայտնելի դէմ գործած կարճեցեալ հարստաւորութիւնների մասին, ինչպէս և մակիդոնական կոմիտեաներին վերաբերել դիտաւորութիւն, թէ նրանք սպանութեան փորձեր պէտք է անեն ժամադրման լեւոնական գործակալի յանձնաժողովի անդամներին դէմ,—նպատակ ունեն միայն նպատակ յունական պրօպագանդային և նրա ձգտումներին՝ դժուարացնել ընթերցանելի իրադրոժումը, որոնք օգտակար են բողոք ժողովրդին: Վերջին խորհրդակցութեան ժամանակ քաղաքացիական գործակալների հետ, Հիլմի փայտ յայտնեց, որ կը գնայ Բիտուլի, որովհետև Սալոնիկում ժամադրմանից վերադադմութիւնը բաւական առաջ է գնացել: Հիլմի փայտն պէտք է խնդրէ Բ. Դոնից լրացուցիչ կրեկիտներ, գոհացնելու համար այն անձանց պահանջները, որոնք վնասվել են անցեալ տարվայ ապստամբութիւնից:

ՆԻՒ-ԵՕՐԿ: Օ՛հիօ շտապից և Ինդիանա շտապի հիւսիսային մասից հաղորդում են մեծ հեղեղների մասին:

Կ. ՊՈԼԻՍ: Բողաւոր-թիւրքական բանակ-ցութիւնների մասին լուրերը շարունակում են աննպատակ լինել, թէ և բողաւորական կառավարութիւնը բանակցութիւնների ժամանակ մեծ գիշողութիւն է ցոյց տալիս: Քաղաքական շրջաններում, շնորհիւ դրան, տիրում է յուզիչ տրամադրութիւն: Բ. Դոնան պատասխանին, մարտի 16-ին, դաշնադիր պետութիւնների դեսպանները յանձնեցին նրան մարտի 21-ին յիշատակագիր, որի մէջ շարունակում են պնդել իրանց պահանջները վրա ժամադրմանից վերադադմութեան մասին, ինչպէս և օտարազգի օֆիցերներին և ենթա-օֆիցերներին նշանակված քանակութեան վրա:

ԲԵՐԼԻՆ: «Nord. Allg. Zeitung» յայտնում է, որ Վիլհելմ Կայսրի առողջութիւնը երկար ժամանակ գեղեցիկ դրութեան մէջ է գտնուում: Առողջութիւնը վերջնականապէս վերականգնելու նպատակով սկսված ճանապարհորդութեան հետեանքը բոլորովին կաշտովի:

ՄԱՆԻԱԼԻՆ: «Ճարեւէ» և Ումբրիա» կրէյսերները դուրս եկան Բարցիւնա՝ ողջունելու Ալֆօնս թագաւորին:

22 մարտի

ՍԵՒԱՍՏՊՈԼ: Քաղաքը զարգարված է դրօշակներով: Նախիմովի հրապարակի վրա դաւաւորված էին գործերը, որոնք դժուարութեամբ էին կարողանում զսպել ճնշումն անհամար ամբողջի, որ տնկում էր աւելի մօտից տեսնել հեղափոխութիւն: Շոգենաւին դիմաւորելու ծով դուրս եկաւ մի անանաւա բարձրացրած մի ազգանշանով վրան գլուխը—«Ողջոյն քաղաքին»: Անա երեւց «Ս. Նիկոլայ» և, զարգարվելով դրօշակներով, մօտաւ նաւակայանը: «Ռօստոկ» զբաղակիրի վրայից նրա

Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81.